ՀՈԴՎԱԾՆԵՐ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԸ «ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼ» ԱՄՍԱԳՐԻ ԷՋԵՐՈՒՄ (1919—1921 թթ.)

Հ. Խ. ԴԱՐԲԻՆՅԱՆ

Կոմունիստական ինտերնացիոնալի I կոնգրեսի որոշմամբ 1919 թ. մարտից սկսեց լույս տեսնել «Կոմունիստական ինտերնացիոնալ» («Коммунистический Интернационал») ամսագիրը, որը կարևոր դեր խաղաց մարքսլենինյան ուսմունքի պրոպագանդման, միջազգային կոմունիստական շարժման տեսության, ստրատեգիայի ու տակտիկայի արմատական հարցերի մշակման և հետագա զարգացման գործում։ «Կոմունիստական ինտերնացիոնալի» էջերում տպագրվում էին Վ. Ի. Լենինի հոդվածներն ու աշխատությունները, որոնք գործողության ուղեցույց էին միջազգային կոմունիստական շարժման ստրատեգիական գծի և պայքարի տակտիկական միջոցների մշակման համար։

Ամսագրին ակտիվորեն աշխատակցում էին միջազգային կոմունիստական շարժման ականավոր գործիչներ Կ. Ցետկինը, Մ. Ցխակայան, Մ. Կաշենը, Մ. Թորեզը, Պ. Տոլյատտին, Գ. Դիմիտրովը, Վ. Պիկը, Ջ. Ռիդը, Յու. Մարխլևսկին, Դ. Մանուիլսկին և շատ ուրիշներ։

«Կոմունիստական ինտերնացիոնալի» էջերում հաճախ արտացոլվում էր նաև Անդրկովկասի կյանքը։ Հոդվածներ, նյութեր էին տպագրվում Անդրկովկասի ժողովուրդների ծանր դրության, նրանց հերոսական պայքարի մասին՝ ընդդեմ բուրժուա-ազգայնական կառավարությունների հակաժողովրդական քաղաքականության։ Այդ հոդվածներում մերկացվում էին ինչպես Անտանտի իմպերիալիստները, որոնք ցանկանում էին իրենց տիրապետությունը հաստատել Անդրկովկասում, այնպես էլ Երկրորդ ինտերնացիոնալի առաջնորդները, որոնք ամեն կերպ ձգտում էին Անդրկովկասը դարձնել հենակետ՝ բոլշևիզմի դեմ պայքարելու համար։

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունից հետո, երբ ամբողջ աշխարհում մեծ վերելք էր ապրում կոմունիստական շարժումը և Կոմունիստական ինտերնացիոնալի ստեղծման հարցը դրվել էր օրակարգում, 1914 թ. կրախի մատնված Երկրորդ ինտերնացիոնալի առաջնորդները որոշեցին արագացնել միջազգային օպորտունիստական այդ կազմակերպության վերականգնումը։ Այդ ուղղությամբ առաջին կոնֆերանսները տեղի ունեցան 1919 թ. Բեռնում և Լյուցերնում։ Դրանց մասնակցում էին նաև Անդրկովկասի հակաժողովրդական կուսակցությունների պատվիրակությունները։

Կոնֆերանսներում բազմաթիվ այլ հարցերի հետ միասին քննարկվեց նաև տարածքների հարցը, որն անմիջականորեն վերաբերում էր փոքր, այդ թվում նաև Անդրկովկասի ժողովուրդներին։ Բեռնի կոնֆերանսում այդ հարցի քննարկման ժամանակ շվեդ սոցիալիստ Բրանտինգը փոքր ժողովուրդներին խոր-

հուրդ էր տալիս «իրենց պահանջներում հեռու չգնալ՝ ոգեշնչված հաջողություններից»[1]:

Բեռնի և Լյուցերնի կոնֆերանսների առթիվ «Կոմունիստական ինտերնացիոնալ» ամսագրում հանդես եկավ Գ. Չիչերինը։ Խոսելով մինչև առաջին համաշխարհային պատերազմը երկրորդ ինտերնացիոնալի վարած միջազգային քաղաքականության մասին, նա նշեց. «Դեղին (երկրորդ— Հ. Դ.) ինտերնացիոնալը Բեռնում և Լյուցերնում շարունակեց այդ ավանդույթը՝ ոչնչով չհակասելով վերջին տարիներս, և առանձնապես պատերազմից առաջ, տարածում ստացած այն տեսակետին, որի համաձայն նա իբր հոգ էր տանում Վրաստանի, Հայաստանի, Ֆիումի և ուրիշ ժողովուրդների հարցերը դրականորեն լուծելու մասին, դրանով իսկ անգնահատելի ծառայություններ մատուցելով համաշխարհային ռեակցիային»[2]։ Խոսելով իմպերիալիստական երկրների զավթողական պլանների մասին, որոնց իրականացմանը մեծապես աջակցում էին Դեղին ինտերնացիոնալի առաջնորդները, Գ. Չիչերինը նշում էր, որ ամենուրեք, ուր ծավալվում է ազատագրական պայքարը, կապիտալիստները դիմում են նոր քայլերի՝ այդ պայքարը թուլացնելու և կողոպուտի նոր աղբյուրներ ձեռք բերելու համար։ Եվ եթե ապստամբած ժողովուրդն այդ պայքարում կարողանա սեփական ուժերով ձեռք բերել դրական արդյունքներ, ապա դա անկասկած մեծ նվաճում կլինի, բայց եթե այդ արդյունքները ձեռք են բերվում այս կամ այն կապիտալիստական երկրի ողորմածության հաշվին (թեկուզ և սոցիալիստների ճնշմամբ), ապա դա կատարվում է միայն կապիտալիստական տվյալ երկրի գիշատիչ քաղաքականության շահերից ելնելով։

Այնուհետև նա գրում էր. «եթե 2-րդ ինտերնացիոնալի ժամանակ սոցիալիստական շարժման հեղափոխական թևը միջազգային քաղաքականության բնագավառում կարողանում էր իր առջև դնել ընթացիկ շատ հարցեր, ինչպես օրինակ ճայկական, սիրիական, միայն որպես չլուծվող խնդիրներ, ապա ներկայումս երրորդ ինտերնացիոնալը հակադրվում է վերջինիս (երկրորդ ինտերնացիոնալին— Հ. Դ.). ամենուրեք, որտեղ որ նա հանդես է գալիս, առաջ է քաշում սովետական շինարարության և իմպերիալիստական ճնշումից ժողովուրդների ազատագրության ռեալ խնդիրներ ու հեռանկարներ»[3]։

«Կոմունիստական ինտերնացիոնալում» լույս տեսավ նաև Ս. Ռուտդերսի «Ազգերի լիգան և փոքր ժողովուրդները» հոդվածը։ Ցույց տալով, որ Ազգերի լիգան փոքր ժողովուրդների ոչ թե իսկական, այլ կեղծ բարեկամն է, հեղինակն այնուհետև այդ ժողովուրդների ազատագրման հարցը իրավացիորեն կապում էր պրոլետարական հեղափոխության հաղթանակի հետ։

«Կոմունիստական ինտերնացիոնալի» էջերում հաճախ տպագրվում էին հոդվածներ, որոնցում ցույց էր տրվում Արևելքի և առանձնապես Անդրկովկասի ժողովուրդների նկատմամբ իմպերիալիստական տերությունների վարած քաղաքականության նվաճողական էությունը։ Այդ հոդվածներում մերկացվում էր սովետական երիտասարդ հանրապետության նկատմամբ իմպե-

---

1 «Правда», 8.II.1919 (ընդգծումները մերն են—Հ. Դ.)։

2 «Коммунистический Интернационал», 1919, № 6, стр. 818—819.

3 Նույն տեղում, էջ 827—828։

բիալիստական ռեակցիոն շրջանների քաղաքականությունը, որի նպատակն էր Անդրկովկասը վերածել բոլշևիզմի դեմ պայքարի հենակետի։ Այդ միտքն էր արտահայտված նաև Կոմինտերնի գործկոմի կոչում՝ ուղղված «Պարսկաստանի, Հայաստանի և Թուրքիայի հարստահարված ժողովրդական մասսաներին», ինչպես նաև «Կոմունիզմը Հայաստանում» ու «Սովետական Ռուսաստանը և անգլո-ֆրանսիական ինտրիգները Արևելքում» հոդվածներում։ «Կոմունիզմը Հայաստանում» հոդվածում ասված էր. «Հայաստանի բանվորագյուղացիական մասսաների նկատմամբ միջազգային իմպերիալիստների ծաղրուծանակը առանձնապես պարզորոշ արտահայտվեց Հայաստանի մանդատն ընդունելու մեջ։ Մինչև այժմ էլ Հայաստանի մանդատի սակարկությունները իմպերիալիստների կողմից շարունակվում են։ Բայց իմպերիալիստները այնուամենայնիվ ձեռքից բաց չեն թողնում Հայաստանը, որը ամենից առաջ նրանց հարկավոր է բոլշևիզմի դեմ պայքարելու համար»[4]։

Մ. Պավլովիչը (Վալտման) «Սովետական Ռուսաստանը և անգլո-ֆրանսիական ինտրիգները Արևելքում» հոդվածում ցույց էր տալիս, որ անգլո-ֆրանսիական իմպերիալիստներն ամեն կերպ ցանկանում են իրենց ազդեցությունն ամրապնդել Արևելքում, սակայն «Սովետական Ռուսաստանի գոյությունը խանգարում է իմպերիալիստական տերությունների ավազակային պլանների իրականացմանը Արևելքում»[5]։ Հոդվածագիրը նկատում է, որ Արևելքում ծավալված հեղափոխական շարժումներից մասսաների ուշադրությունը շեղելու նպատակով Անգլիան և Ֆրանսիան Ռուսաստանի դեմ հարձակման նետեցին սպիտակ լեհերին և Վրանգելին, դրա հետ միասին շարունակելով ամրապնդել մենշևիկների և դաշնակցականների իշխանությունը Վրաստանում և Հայաստանում։ Հոդվածագիրը միաժամանակ ընդգծում էր, որ «պատերազմը Սովետական Ռուսաստանի դեմ՝ դա պատերազմ է հեղափոխական Արևելքի դեմ, և ընդհակառակը, պատերազմը Արևելքի դեմ՝ դա պատերազմ է Սովետական Ռուսաստանի դեմ»[6]։ Հետևաբար, երբ եվրոպական իմպերիալիստները զենքով, փողով ու հացով աջակցում էին մենշևիկյան Վրաստանին և դաշնակցական Հայաստանին, ապա դա անում էին ելնելով միայն իրենց շահերից, նպատակ ունենալով տապալելու սովետական իշխանությունը Ռուսաստանում և Կովկասը կտրելու Ռուսաստանից։ «Անգլիան,— գրում էր հոդվածագիրը,— չի բավարարվում մեր դեմ միայն քրիստոնեական պետություններից կազմված միավորումով (Վրաստան, Հունաստան, Հայաստան, վրանգելյան Ղրիմ), այլ փորձում է նաև մեր դեմ պայքարի մեջ ներքաշել մուսուլմանական մասսաներին»[7]։

Սովետական Ռուսաստանի դեմ մղվող պայքարում իմպերիալիստները կարևոր տեղ էին հատկացնում Բաքվին. «Կարելի է առանց չափազանցացնելու ասել, որ ոչ միայն Ռուսաստանի համառուսական ֆեդերացիայի աշխատավոր մասսաների բախտը, այլ նաև 3-րդ ինտերնացիոնալի ապագան նշանակալի չափով կախված է այն բանից, թե ում ձեռքին կգտնվի Բաքուն»[8]։

---

4 Նույն տեղում, 1920, № 13, էջ 2544։
5 Նույն տեղում, № 14, էջ 2769։
6 Նույն տեղում։
7 Նույն տեղում, էջ 2770։
8 Նույն տեղում, էջ 2773։

Այդ պատճառով էլ, երբ Ադրբեջանում հաղթանակեց սովետական իշխանությունը, Անգլիան և Ֆրանսիան ամեն կերպ ջանում էին մենշևիկյան Վրաստանը և դաշնակցական Հայաստանը կռվի մեջ քաշել Սովետական Ադրբեջանի դեմ։ Բայց քանի որ 1920 թ. մայիսին Սովետական Ռուսաստանի և Վրաստանի միջև կնքվել էր խաղաղության պայմանագիր, վրացական մենշևիկները ստիպված էին գործել զգուշորեն և թաքցնել իրենց մտադրությունները։ «Վրացական պրոլետարիատի տրամադրությունը այնպիսին է, որ վրացական ոչ մի կառավարություն չի համարձակվի ժողովրդական մասսաներին ի հայտ դարձնել Սովետական Ռուսաստանի վրա հարձակվելու իր պլանը»[9]։ Այդ խնդրի իրագործումը (նաև հարձակումը Սովետական Ադրբեջանի վրա) արագացնելու նպատակով իմպերիալիստներին իրենց ծառայությունն առաջարկեցին Երկրորդ ինտերնացիոնալի առաջնորդները՝ Վանդերվելդեն, Գյուիսմանսը, Մակդոնալդը, Թոմաս Շոուն, Սնոուդենը և Ռենոդելը, որոնք 1920 թ. սեպտեմբերին եկան Վրաստան։ Փոքր անց Վրաստան եկավ նաև Կաուցկին՝ որպես «մասնավոր անձ»։ «Կոմունիստական ինտերնացիոնալում» այդ առթիվ տպագրվեց հոդված՝ «Դեղին ինտերնացիոնալի երկրում (մենշևիկյան արկադիա)» խորագրով։ Հոդվածագիրը գտնում էր, որ Երկրորդ ինտերնացիոնալի առաջնորդների ուղևորության գլխավոր նպատակն է կազմակերպել ցուցադրական ելույթ Սովետական Ռուսաստանի և Կոմինտերնի դեմ, որը գնալով մեծ հեղինակություն էր ձեռք բերում և Երկրորդ ինտերնացիոնալից խլում նրա շարքային անդամներին։ Երկրորդ ինտերնացիոնալի առաջնորդները, ասված էր հոդվածում, մի կողմից, ձգտում էին օգնել Անտանտին՝ բոլշևիզմի և ծավալվող հեղափոխական շարժումների դեմ մղվող պայքարում, մյուս կողմից՝ աջակցել վրացական մենշևիկյան կառավարությանը՝ ամրապնդելու իր դիրքերը երկրում։

Երկրորդ ինտերնացիոնալի ղեկավարների վարքագիծը Վրաստանում, նրանց ռազմաշունչ ճառերը Սովետական Ռուսաստանի և Ադրբեջանի հասցեին պարզորոշ ցույց էին տալիս, որ այդ այցը բացահայտորեն ուղղված էր բոլշևիզմի դեմ։ «Անկասկած է, որ Ռենոդելը, Վանդերվելդեն և Գյուիսմանսը ժամանել էին իրենց կառավարություններից որոշակի գաղտնի հանձնարարականներով»[10]— ասված էր վերոհիշյալ հոդվածում։ Թիֆլիսում տեղի ունեցած ժողովներից մեկում Ռենոդելը Սովետական Ադրբեջանի դեմ բացահայտ պատերազմի կոչ արեց[11]։

Երկրորդ ինտերնացիոնալի պարագլուխները՝ Ռենոդելը, Վանդերվելդեն, Կաուցկին և նրանց գործակիցները, իմպերիալիստների կողմից Սովետական Ռուսաստանի դեմ սանձազերծած պատերազմը համարում էին սուրբ, քանի որ այն ուղղված էր սովետական իշխանության և Կոմինտերնի դեմ։ «Ինտերնացիոնալի պատգամների պաշտպանները» (այսպես էին անվանում վրացական մենշևիկները Երկրորդ ինտերնացիոնալի առաջնորդներին) Գյուիսմանսի բերանով հայտարարում էին, թե իբր «3-րդ ինտերնացիոնալը (Կոմինտերնը— Հ. Դ.) Եվրոպայում և Ամերիկայում ներկայացված է միայն ծայրահեղ ձախ սոցիալիստական կուսակցություններով և կմահանա Սովետական Ռու-

9 Նույն տեղում, էջ 2775—2776։

10 Նույն տեղում, №15, էջ 3164։

11 Նույն տեղում։

սաստանի անկման հետ միաժամանակ»[12]։ Այդպիսի հույսեր էր փայփայում նաև Կաուցկին, որը սրտագին համակրանքով էր վերաբերվում Վիլսոնին, Միլերանին, Վրանդելին և բոլոր նրանց, ովքեր ակտիվ պայքարի էին դուրս եկել սովետական իշխանության դեմ։ Անտանտի հակասովետական պլաններում մենշևիկյան Վրաստանին հատկացված դերի կապակցությամբ հանդես եկավ Կոմինտերնի գործկոմի անդամ Մ. Ցխակայան։ Խոսելով Վրաստանում Երկրորդ ինտերնացիոնալի ներկայացուցիչների պատվին կազմակերպված ընդունելությունների մասին, Մ. Ցխակայան նշեց. «բանվորական Թիֆլիսն իր պրոլետարական մեծամասնությամբ լռեց, չերևաց շքերթներում, իսկ ով էլ որ երևաց, շատ սառը ընդունեց «թանկագին հյուրերին»[13]։ Եվ դա այն դեպքում, երբ կառավարությունը ստիպում էր բանվորներին և գյուղացիներին՝ հյուրերին ընդունել հավուր պատշաճի։ Սակայն ոչ մի ոգևորություն, բացի պաշտոնական ճառերից։ Երկրորդ ինտերնացիոնալի առաջնորդները այդ հանդիպումներից հետո համոզվեցին, որ վրաց բանվորների և գյուղացիների համակրանքը լիովին սովետական իշխանության կողմն է։ Անդրադառնալով Հայաստանի տնտեսական ծանր վիճակին, Մ. Ցխակայան դրա գլխավոր պատճառը համարում էր դաշնակների հակաժողովրդական քաղաքականությունը և դաշնակցական կառավարության՝ դեպի Անտանտան ունեցած կողմնորոշումը։ Ընդունելով Անտանտի հովանավորությունը, դաշնակները ժողովրդին հասցրին ծայրահեղ աղքատության շեմին, երկրի անկախությունը դնելով հարցականի տակ։ Դաշնակցական կառավարությունը արյան մեջ խեղդեց Մայիսյան հերոսական ապստամբությունը։ Բայց չնայած դրան, նշում էր Մ. Ցխակայան, «կոմունիզմն ապրում է Հայաստանում»[14]։

«Կոմունիստական ինտերնացիոնալի» էջերում Անդրկովկասին (և ընդհանրապես Արևելքին) նվիրված հոդվածներում մեծ տեղ էր տրվում նաև ազգային-ազատագրական շարժման հարցերին։ 1920 թ. ամռանը Մոսկվայում տեղի ունեցավ Կոմինտերնի II կոնգրեսը, որին մասնակցում էին նաև գաղութային և հետամնաց երկրների հեղափոխական շարժման շատ ներկայացուցիչներ։ Դա միայն «թույլ սկիզբն էր», բայց կարևորն այն էր, որ այն դրված էր։ Արևելքի շատ երկրների պատվիրակությունների հետ միասին կոնգրեսին մասնակցեցին և գրավոր զեկուցագրեր ներկայացրին Վրաստանի ու Հայաստանի կոմունիստական կուսակցությունների ներկայացուցիչները։

Կոնգրեսում քննարկված ամենակարևոր հարցերից մեկը հեղափոխության ժամանակ պրոլետարիատի դաշնակիցների հարցն էր[15]։ Այդ առումով քննարկվեցին ագրարային և ազգային-գաղութային հարցերը, որոնց թեզիսները գրել էր Վ. Ի. Լենինը[16]։ Նա մասնակցեց նաև ազգային-գաղութային հարցերի վերաբերյալ զեկուցումների քննարկմանը, զեկուցումով հանդես եկավ կոնգրեսի պլենար նիստում։ Եթե Երկրորդ ինտերնացիոնալը սահմանափակվում էր այդ հարցերի վերաբերյալ միայն բանաձևերի ընդունումով, «որոնք կյանքում երբեք չիրականացվեցին,— իր ելույթում ընդգծեց Իրանի կոմկուսի ներ-

---

12 Նույն տեղում։

13 Նույն տեղում, էջ 3117։

14 Նույն տեղում, էջ 3124։

15 «Второй конгресс Коминтерна», М., 1921.

16 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 31, էջ 164—173։

կայացուցիչ Սուլթան-զադեն—առաջին անգամ այժմ, Կոմունիստական ինտերնացիոնալի 2-րդ կոնգրեսում, այդ հարցը քննարկվում է խորը և բազմակողմանիորեն, Արևելքի և Ամերիկայի գաղութային և կիսագաղութային համարյա բոլոր երկրների ներկայացուցիչների մասնակցությամբ»[17]։

Ասվեց, որ կոնգրեսին մասնակցում էին նաև Հայաստանի և Վրաստանի կոմունիստական կուսակցությունների պատվիրակությունները։ Կոնգրեսին Հայաստանի կոմկուսի ներկայացրած զեկուցագիրը տպագրվեց «Կոմունիստական ինտերնացիոնալ» ամսագրում[18]։ Զեկուցագրում մեծ տեղ էր հատկացված նաև ազգային-ազատագրական շարժման հարցերին։ Դեռ մինչև Կոմինտերնի II կոնգրեսի հրավիրումը տեղի էր ունեցել Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների կոնֆերանսը (1920 թ. հունվար)։ Նրա ընդունած բանաձևում ընդգծվում էր, որ «Ռուսաստանի հեղափոխությունն առաջ է քաշել բոլոր ճնշված ժողովուրդներին և առաջին հերթին Արևելքի ժողովուրդներին իմպերիալիզմի լծից ազատագրելու լոզունգը։ Արևելքն արդեն ոտքի է կանգնել և նրա համակրանքը Սովետական Ռուսաստանի կողմն է՝ ընդդեմ համաշխարհային իմպերիալիզմի։ Բայց տարակույս չկա, որ այդ շարժումը կրելու է ազգային-ազատագրական բնույթ»[19]։ Այդ հարցն առանձնապես սուր էր դրված Հայաստանում, որի «իշխող կուսակցությունը Հայաստանի ազգային-ազատագրական շարժումը վերջնականապես և անդառնալիորեն կապել է իմպերիալիզմի հաղթանակի հետ»[20]։

Կոնգրեսի պատգամավորները բարձր գնահատեցին սովետական պետական շինարարության փորձը սովետական Միջին Ասիայում և միահամուռ հավանություն տվեցին լենինյան եզրակացությանը, որ «...առաջավոր երկրների պրոլետարիատի օգնությամբ հետամնաց երկրները կարող են անցնել սովետական կարգին և զարգացման որոշ աստիճանների միջոցով՝ կոմունիզմին, խուսափելով զարգացման կապիտալիստական ստադիայից»[21]։

Թե որքան մեծ նշանակություն էր տրվում ազգային-ազատագրական շարժմանը, երևում է նաև նրանից, որ կոնգրեսը որոշեց Բաքվում հրավիրել Արևելքի երկրների ժողովուրդների I համագումարը։ Այդ առթիվ, արդեն 1920 թ. օգոստոսին, Կոմինտերնի դործկոմը հատուկ կոչով դիմեց «Պարսկաստանի, Հայաստանի և Թուրքիայի հարստահարված ժողովրդական մասսաներին». այդ կոչը տպագրվեց «Կոմունիստական ինտերնացիոնալում»[22]։ «Կոչում» ցույց էր տրվում, որ համագումարի խնդիրը պետք է լինի միավորել Եվրոպայի և Ամերիկայի բանվորա-գյուղացիական շարժումը Արևելքի երկրների ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարի հետ, որը կարագացնի «համաշխարհային կապիտալիզմի կործանումը և կապահովի ամբողջ աշխարհում բանվորների և գյուղացիների ազատագրումը»[23]։ Կոչը նշում էր, որ անվերադարձ անցել են այն ժամանակները, երբ կապիտալիստները կարող էին զենքի ուժով ճնշել

---

17 «Протоколы конгрессов Коминтерна Второй конгресс Коминтерна, июль-август 1920 г.», М., 1934, стр. 118.

18 «Коммунистический Интернационал», 1920, № 13.

19 Նույն տեղում, էջ 2545։

20 Նույն տեղում։

21 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 31, էջ 295։

22 «Коммунистический Интернационал», 1920, № 12.

23 Նույն տեղում, էջ 2259։

Արևելքի ժողովուրդների ազատագրական ոգին։ Եվ թեև Եվրոպայում կապիտալիզմը դեռևս չի տապալված, բայց «աշխատավորական մասսաները հասկացել են, որ իրենց ուժը միայն միասնության և կազմակերպվածության մեջ է, որ միայն դրա մեջ է իրենց հաղթանակի գրավականը»[24]։ Հենց այդ պատճառով էլ նրանց լավագույն ներկայացուցիչները ստեղծեցին հզոր մի կազմակերպություն հանձինս Կոմինտերնի։ Եվ ահա «Կոմունիստական ինտերնացիոնալի Գործադիր կոմիտեն, որպես անգլիական, ֆրանսիական, ամերիկյան, գերմանական և իտալական բանվորների ներկայացուցիչ, ժամանում է Բաքու, որպեսզի ձեզ հետ միասին քննարկի այն հարցերը, թե ինչպես միավորի եվրոպական պրոլետարիատի ջանքերը ձեզ հետ՝ հանուն ընդհանուր թշնամու դեմ մղվող պայքարի»[25]։

Հետագայում գնահատելով համագումարի նշանակությունն Արևելքի ժողովուրդների ազատագրության համար մղվող պայքարում, Վ. Ի. Լենինը գրում էր. «Թե ինչ արին Մոսկվայում կայացած կոմունիստների համագումարը և Բաքվում կայացած Արևելքի ժողովուրդների կոմունիստների ներկայացուցիչների համագումարը, դա անկարելի է միանգամից չափել, դա անկարելի է անմիջական հաշվառման ենթարկել, բայց դա այնպիսի նվաճում է, որն ավելի է, քան մյուս ռազմական հաղթանակները, որովհետև նա ցույց է տալիս մեզ, որ բոլշևիկների փորձը, նրանց գործունեությունը, նրանց ծրագիրը, կապիտալիստների և իմպերիալիզմի դեմ հեղափոխական պայքար մղելու նրանց կոչը ընդունելություն գտան ամբողջ աշխարհում և այն, ինչ որ արված է Մոսկվայում հուլիսին և Բաքվում սեպտեմբերին, դեռ երկար ամիսներ կյուրացնեն և կմարսեն աշխարհի բոլոր երկրների բանվորներն ու գյուղացիները»[26]։

«Կոմունիստական ինտերնացիոնալ» ամսագրում Անդրկովկասի, առանձնապես վրաց ժողովրդի ազատագրական պայքարի հարցերը բարձրացվել են նաև Մ. Ցխակայայի «Վրաստանի մենշևիկները և Հայաստանի դաշնակները (Դեղին ինտերնացիոնալի գալերեան)» և «Վրաստանի մենշևիկների գարշապարի տակ» հոդվածներում։ Նրանցում Մ. Ցխակայան մերկացնում է վրացական մենշևիզմի և հայկական դաշնակցության ղեկավարների գործունեությունը հատկապես Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակից հետո, երբ նրանք Անդրկովկասը կտրեցին Սովետական Ռուսաստանից և երկրամասը հանձնեցին իմպերիալիստական տերությունների ողորմածությանը։ «Վրացական մենշևիկները վրացի բանվորների և գյուղացիների, Սովետական Ռուսաստանի դեմ վարած դավաճանական քաղաքականությամբ իրենց համար ստեղծեցին կործանման հնարավորություն։ Դրա համար էլ նրանք տապալվեցին այդպես խայտառակաբար»[27]։

1921 թ. հուլիսի 12-ին ճառով հանդես գալով Կոմինտերնի III կոնգրեսում, Մ. Ցխակայան հետևողականորեն մերկացրեց մենշևիկների դավաճանական քաղաքականությունը և հայտարարեց, որ «սովետական եղբայրական հանրապետությունների հետ դաշինքի մեջ մտած, Կոմունիստական ինտերնացիո-

---

24 Նույն տեղում։

25 Նույն տեղում, էջ 2261—2262։

26 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 31, էջ 407—408։

27 «Коммунистический Интернационал», 1921, № 18, стр. 4754.

նալի ղեկավարությամբ, այդ երկրում (Վրաստանում— Հ. Դ.) կբարձրանա սոցիալիզմի հարուստ բերքը»[28]։

«Կոմունիստական ինտերնացիոնալ» ամսագրում տպագրված բազմաթիվ նյութերում նկատելի տեղ էր տրվում Անդրկովկասի աշխատավոր զանգվածների տնտեսական ծանր վիճակի նկարագրությանը։ Այսպես, 1920 թ. № 13-ում պատկերելով Հայաստանում տիրող տնտեսական ու քաղաքական ծանր դրությունը, ամսագիրը շեշտում էր, որ «ազատ ու անկախ Հայաստանը» դաշնակների ձեռքում դարձել է բանվորներից ու գյուղացիներից «անկախ» ե սպեկուլյանտների, մաուզերիստների, կուլակների և դենիկինյան սպաների համար «ազատ» երկիր»[29]։ Հոդվածում մերկացվում էր դաշնակցական կառավարության հակաժողովրդական քաղաքականությունը, որը նպաստում էր սպեկուլյացիայի ազատ զարգացմանը և երկրում «ստեղծում սովահար մասսաների բանակ»[30]։ Ահա թե ինչու «մաուզերիստների ռեժիմը, որ իրենից վանել էր գյուղացիությանը, էլ ավելի խիստ վանեց բանվորներին»[31]։

Տնտեսական ծանր կացության մեջ էին գտնվում նաև Ադրբեջանի ե Վրաստանի աշխատավորները։ «Կոմունիստական ինտերնացիոնալի» № 18-ում տպագրված «Վրաստանը մենշևիկների գարշապարի տակ» հոդվածում բերված են բազմաթիվ փաստեր վրաց գյուղացիների և բանվորների տնտեսական անտանելի դրության մասին։ Այդ փաստերն ակնհայտ ցույց էին տալիս, որ բանվորների և գյուղացիների սոցիալական պայքարի գլխավոր պատճառը նրանց տնտեսական և քաղաքական ծանր վիճակն էր։

Անդրկովկասի ժողովուրդների ազատագրության հարցերը շարունակ դրտնվում էին Կոմինտերնի գործկոմի և «Կոմունիստական ինտերնացիոնալ» ամսագրի խմբագրության ուշադրության կենտրոնում։ Գործկոմի բազմաթիվ նիստերում քննարկվել են Անդրկովկասում տիրող վիճակի, նրա ժողովուրդներին ցույց տրվող օգնության հարցերը։ Գործկոմի 1920 թ. նոյեմբերի 28-ի նիստում Անդրկովկասի վիճակի մասին հաղորդումով հանդես եկավ Մ. Պավլովիչը, որն իր ելույթի մեծ մասը նվիրեց Հայաստանում տիրող վիճակին և այնտեղ նախապատրաստվող ապստամբությանը։ Իսկ հաջորդ օրը Հայաստանում արդեն հաստատվեց սովետական իշխանություն։ Այդ մասին հաղորդում տպագրվեց «Կոմունիստական ինտերնացիոնալ» ամսագրի 15-րդ համարում։ Կոմինտերնի գործկոմի 1921 թ. հունվարի 9-ի, 10-ի և 14-ի նիստերում լսվել է Մ. Ցխակայայի զեկուցումը «Վրաստանի դրության մասին»։ Այդ հարցին ամսագիրն անդրադարձավ իր 16-րդ համարում։

«Կոմունիստական ինտերնացիոնալ» ամսագիրը իր էջերում լայնորեն լուսաբանում էր Սովետական Ռուսաստանի նկատմամբ երկրամասի աշխատա-

---

28 «3-ий конгресс Коминтерна», М., 1922, стр. 471. 1925 թ. Մ. Ցխակայայի վերը նշված երկու հոդվածները լույս տեսան առանձին բրոշյուրով՝ հեղինակի առաջաբանով։ Նախաբանում նա գրում է. «Հարկավոր է փաստերով և փաստաթղթերով հերքել այդ սուտը և մենշևիկների, դաշնակների և ռուս սպիտակգվարդիականների բոլոր տեսակի անվանարկումները ՌՍՖՍՀ-ի, նրա բանվորա-գյուղացիական քաշարի կարմիր բանակի հասցեին, որը ապստամբների կոչով օգնեց Հայաստանի բանվորներին և գյուղացիներին 1920 թ. նոյեմբերյան օրերին, իսկ ապա և վրաց ժողովրդին 1921 թ. փետրվարյան օրերին» (М. Цхакая. Грузия и Армения под пятой империалистов, Тбилиси, 1925, стр. 4).

29 «Коммунистический Интернационал», 1920, № 13, стр. 2453.

30 Նույն տեղում, էջ 2454։

31 Նույն տեղում, էջ 2455։

վորների ունեցած վերաբերմունքի, հակաժողովրդական կուսակցությունների ազգայնական քաղաքականության մերկացման, Անդրկովկասի ժողովուրդների ինտերնացիոնալ միասնության և բազմաթիվ այլ հարցեր։ Ամսագիրը ամեն կերպ Անդրկովկասի աշխատավոր զանգվածներին օգնում էր ճիշտ կողմնորոշվելու քաղաքական բարդ իրադրության մեջ, նպաստում էր մարքս-լենինյան դաղափարների տարածմանը, մերկացնում իմպերիալիստական տերությունների նվաճողական քաղաքականությունը փոքր ժողովուրդների նկատմամբ։

ЗАКАВКАЗЬЕ НА СТРАНИЦАХ ЖУРНАЛА «КОММУНИСТИЧЕСКИЙ ИНТЕРНАЦИОНАЛ» (1919—1921 гг.)

Г. Х. ДАРБИНЯН

Резюме

По решению Учредительного конгресса Коминтерна в мае 1919 г. вышел первый номер журнала «Коммунистический Интернационал». Журнал сыграл огромную роль в распространении идей марксизма-ленинизма и в дальнейшем развитии и укреплении международного коммунистического и рабочего движения.

На страницах первых номеров журнала были опубликованы статьи, документы и материалы, всесторонне освещающие тяжелое экономическое положение народов Закавказья и их героическую борьбу против буржуазно-националистических правительств, перспективы развития коммунистического движения и множество других вопросов.

Журнал раскрывал сущность захватнической политики империалистических держав по отношению к Закавказью и призывал к установлению Советской власти в крае.